

Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի մարտ ամսվա նախադեպի ամփոփում

Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է ծավալել 2009 թվականի հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի մարտ ամսվա նախադեպը:

Հաշտարարի գրասենյակը մարտ ամսին ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ քառասուներեք բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերը հարյուրից ավել են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող քառասուներեք բողոքներից քսանչորսը համաձայն օրենքի ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից: Այդ հաճախորդներից 6-ն իրավաբանական անձինք են կամ անհատ ձեռներեցներ, 4-ի բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքը ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, 5-ի պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած 9 բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ:

Հաշտարարի քննությանը ենթակա տասնինը բողոքներից վեցը ստացվել են գրավոր տեսքով և ներկայումս գտնվում են քննության գործընթացում: Երեք հաճախորդներ բանավոր դիմել են Հաշտարարի գրասենյակ, որոնց Գրասենյակի աշխատակիցները պարզաբանել են իրենց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև օգնել են շարադրել կազմակերպությանն ուղղված բողոք-պահանջները, որոնցում նշվել է, որ հաճախորդը պատրաստվում է դիմել Հաշտարարի գրասենյակ: Սրա արդյունքում նշված երեք բողոքները բավարարվել են կազմակերպությունների կողմից՝ առանց հաշտարարի միջամտության: Մնացած տասը պահանջների քննությունը Հաշտարարի լիազորությունների շրջանակում էին, սակայն հաճախորդները նախապես սահմանված կարգով իրենց բողոք-պահանջները չէին ներկայացրել ֆինանսական կազմակերպությանը: Գրասենյակի աշխատակիցները օգնել են վերջիններիս ձևակերպել իրենց պահանջները և ուղղել ֆինանսական կազմակերպությանը:

Նախորդ ամսում հաշտարարի կողմից ստացված չորս գրավոր պահանջներից մեկի քննությունը դադարեցվել է հաճախորդի դիմումի համաձայն, մեկի վերաբերյալ կայացվել է պահանջը մերժելու վերաբերյալ որոշում, իսկ մյուս երկու պահանջները բավարարվել են՝ Հաշտարարի միջամտությամբ հաճախորդին և կազմակերպությանը հաշտեցնելու միջոցով:

Առ 15 ապրիլի դրությամբ՝ մարտ ամսվա ընթացքում Հաշտարարի կողմից ստացված վեց գրավոր պահանջներից մեկի վերաբերյալ կայացվել է պահանջը մերժելու վերաբերյալ որոշում, երկուսը բավարարվել են՝ Հաշտարարի միջամտությամբ հաճախորդին և կազմակերպությանը հաշտեցնելու միջոցով, իսկ մյուս երեք պահանջները դեռևս գտնվում են քննության գործընթացում:

Ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	43
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	19
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	10
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա	3
1.3. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ	6
1.3.1 Կապված են վճարահաշվարկային գործարքների (բանկոմատով կատարվող քարտային գործարքների և հաշվի սպասարկման) հետ	2
1.3.2 Կապված են ժամկետային ավանդների հետ	2
1.3.3 Կապված են ապահովագրական հատուցումների հետ	1
1.3.4 Կապված են վարկային գործարքների հետ	1

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: info@fsm.am